ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. հոկտեմբերի 14-ից 30-ը Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անուն, ազգանունը**

   Վահան Պոտոսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Տարածքային (կապիտալ) ծրագրերի աջակցության և կոշտ թափոնների կառավարման վարչության կոշտ կենցաղային թափոնների կառավարման բաժնի գլխավոր մասնագետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

   Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն (ք. Պեկին), 2024թ. հոկտեմբերի 14-ից 30-ը:

4. **Հրավիրող կողմը**

   Չինաստանի Սոցիալական գիտությունների ակադեմիայի համալսարան:

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

   Մասնակցել «Նոր զարգացող քաղաքների կառավարում» խորագրով կազմակերպվող դասընթացին:

6. **Քննարկված թեմաները**

   Հայաստանյան պատվիրակությունը Աֆրիկայի և Ասիայի 8 այլ երկրների ներկայացուցիչների հետ հյուրընկալվել էր Չինաստանի Սոցիալական գիտությունների ակադեմիայի համալսարանական տարածքում: Դասընթացի ընթացքում ներկայացվել է Չինաստանի քաղաքային զարգացման պատմությունը, վարչական կառավարման, հանրային առողջության պահպանման, տարածական պլանավորման և խցանումների կառավարման, բնապահպանական կառավարման, նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ խելացի քաղաքների ստեղծման Չինական փորձը: Դասընթացի մասնակիցների համար կազմակերպվել են նաև մի շարք ուսուցողական այցեր:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Դասընթացի բացման և փակման արարողությունների ժամանակ հանդես եմ եկել ողջույնի և շնորհակալական խոսքերով:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթեր**

Հրավիրող կողմի կազմակերպչական թիմի, ինչպես նաև դասընթացի մի շարք այլ մասնակիցների հետ ստեղծվել են կապեր, պայմանվորվածություն է ձեռք բերել շարունակել փորձի փոխանակման համագործակցությունը:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքներ**

Առաջարկվել է 8-րդ կետում նշված պայմանավորվածությունն իրագործելու համար հետևողական աշխատանքներ տանել:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը**

01.11.2024թ.